ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 300 - Ա

ՍՏԵՓԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՂՐՂԶՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանին 2026 թվականի ապրիլի 22-25-ը գործուղել Ղրղզստանի Հանրապետություն (Բիշքեկ և Իսիկ-Կուլի մարզ)՝ մասնակցելու Ղրղզստանի վիճակագրության 100-ամյակի հանդիսավոր տոնակատարությանը, «Վիճակագրական բիզնես գործընթացների մոդեռնիզացում. պաշտոնական վիճակագրության նոր էկոհամակարգի ձևավորում» խորագրով միջազգային ֆորումին և ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 75-րդ նիստին:

2. Ընդունել ի գիտություն, որ Ստեփան Մնացականյանի՝ Ղրղզստանի Հանրապետության գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել Ղրղզստանի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ համաձայն

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ